# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » հոկտեմբերի 2020 թվականի թիվ 24

## ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել Ծաղկաբեր համայնքի ղեկավարի համայնքի 2020թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բորջյան Աստղիկ | | 0 | 0 |
| Իգիթյան Արամ | | 0 | 0 |
| Իսրայելյան Ահարոն | | 0 | 0 |
| Հելեյան Գևորգ | | 0 | 0 |
| Ղազարյան Գագիկ | | 0 | 0 |
| Սարգսյան Սարգիս | | 0 | 0 |

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

## Ո Ր Ո Շ Ու Մ

«21 » հոկտեմբերի 2020 թվականի թիվ 25-Ն

## ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և « ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով

*Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.*

1. Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի 01.01.01.51 տնտ. դասակարգումում գումարային փոփոխություն կատարել, չխախտելով նախահաշիվների ընդհանուր թվերը:
2. 01.01.01.51 տնտ.դասակարգման 4269 հոդվածից 294.0 հազ. դրամ տեղափոխել 01.06.01.02 տնտ. դասակարգման 60.0 հազ. դրամ 4266 հոդվածին և 234.0 հազ. դրամ 4267 հոդվածին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բորջյան Աստղիկ | [signature] | 0 | 0 |
| Իգիթյան Արամ | [signature] | 0 | 0 |
| Իսրայելյան Ահարոն | [signature] | 0 | 0 |
| Հելեյան Գևորգ | [signature] | 0 | 0 |
| Ղազարյան Գագիկ | | 0 | 0 |
| Սարգսյան Սարգիս | [signature] | 0 | 0 |

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» հոկտեմբերի 2020 թվական N 26-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բորչյան Աստղիկ | | 0 | 0 |
| Իգիթյան Արամ | | 0 | 0 |
| Իսրայելյան Ահարոն | | 0 | 0 |
| Հելեյան Գևորգ | | 0 | 0 |
| Ղազարյան Գագիկ | | 0 | 0 |
| Սարգսյան Սարգիս | | 0 | 0 |

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 21-ի N 26-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Իսրայելյան Իսմաիլ Հովհաննեսի------50000 /հիսուն հազար դրամ/սոց.օգնություն/ուս.վարձ
2. Բոբջյան Մելինե Մուսաելի--------40000/քառասուն հազար դրամ/սոց.օգնություն/ ուս. վարձ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 90000/իննսուն հազար/ ՀՀ դրամ:

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԾԱՂԿԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 06800998 *